Սույն հրատարակությունը իրագործվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ կողմից Նորվեգիայի Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) ֆինանսական աջակցությամբ:

ՀՀ, Երևան, 0019
Բաղրամյան պող., 24դ, 609 սենյակ
հեռ. / ֆաքս. (+37410) 523604
էլ. փոստ: office@awhhe.am

Հայկական մուֆլոն
(Ovis orientalis gmelinii)

Լուսանկարը՝ Ա. Մալխասյանի

Երևան 2008

Հայկական մուֆլոնն ասիական մուֆլոնի /Ovis orientalis/ ենթատեսակներից է:

Բնակության արեալը

Լուսանկարը՝ Ա. Մալխասյանի

Հայկական մուֆլոնը տարածված է հարավային Հայաստանում, հյուսիս-արևմտյան Իրանում, Նախիջևանում:

Անցյալում հայկական մուֆլոնը լայնորեն տարածված է եղել Հայաստանում: Երևանի մոտ, Հրազդանի կիրճի քարայրներում գտնվել են հայկական մուֆլոնի մեծաքանակ ոսկորներ: Առաջին անգամ Հայաստանում ի հայտ է եկել պալեոլիթի ժամանակաշրջանում: Մինչև անցյալ դարի 50-ական թվականները Հայաստանի Հանրապետության և Նախիջևանի հարավային շրջաններում հայկական մուֆլոնը տեղի բնակչության համար ինտենսիվ որսի օբյեկտ էր: Ներկայումս խիստ հազվագյուտ է դարձել: Հատուկենտ մնացել են բարձր լեռներում, բարձր լեռնային տափաստաններում, ոչ խորը ձորահովիտներում:

Արտաքին նկարագիրը

Հայկական մուֆլոնը միջին կամ խոշոր ոչխարի մեծություն ունի, մարմնի երկարությունը 120 – 147 սմ է, բարձրությունը՝ 77 – 98 սմ, արուի քաշը 50 – 80 կգ է, իսկ էգինը՝ 36 – 46 կգ: Արուի եղջյուրների աղեղնաձև ծայրերը թեքված են ետ և ներս ու վերջանում են խխունջաձև գալարներով: Էգերի եղջյուրները սովորաբար աղեղնաձև են և ոչ մեծ: Դրանք բաց դեղնավուն կամ դեղնամոխրագույն են: Արուն պարանոցի ստորին մասում ունի կախված երկար մազեր՝ ձևավորվելով որպես մորուք կամ այտամորուքներ: Երկար մազեր ունենում է մասամբ պարանոցի վերին մասում և դոշի վրա: Պոչի երկարությունը 13 – 15 սմ է:

Ձմեռը կենդանին շիկադեղնավուն է, դարչնագույն երանգով, մեջքի կողմում միագույն է: Արուն կողքերից երբեմն ունենում է թամբաձև սպիտակ բծեր: Փորի մասում և ոտքերի ներսի կողմում դեղին կամ կեղտասպիտակավուն է: Ամառային երանգավորումն ավելի վառ է:

Կենսակերպը և տնտեսական նշանակությունը

Այժմ հանդիպում է շատ հազվադեպ Հայաստանի հարավային մասում: Հատուկենտ մնացել է բարձր լեռներում, սակայն նախընտրում է բարձր տափաստանները, ոչ խորը ձորերով հովիտները, ձմեռն իջնում է ձորերը: Սնվում է չոր և կանաչ խոտերով՝ առավելությունը տալով հացազգիներին, սիզախոտին, առվույտին, օշինդրին, աղաբույսերին, որոնք վայրի ոչխարի ձմեռվա հիմնական կերամիջոցներն են:

Ամռանն արածում է առավոտյան և երեկոյան, օրվա շոգ ժամերն անց է կացնում ձորերում, քարանձավներում, ծառերի կամ քարերի ստվերներում: Մուֆլոններն ամռանը բարձրանում են լեռների վերին գոտիները, որտեղ հարուստ և փարթամ բուսականություն կա, իսկ ձմեռնամուտին իջնում են ցած՝ ընդհուպ մինչև նախահովիտները, գետահովիտները: Մուֆլոններն ամռանն ապրում են փոքր խմբերով, իսկ ձմռանն այդ խմբերը միանում են միմյանց՝ կազմելով մեծ հոտ կամ նախիր, որոնց գլխաքանակը կարող է հասնել մինչև հարյուրի: Նրանք գարնանը, սերունդ տալուց առաջ նորից բաժանվում են փոքրաթիվ խմբերի: Հայաստանում մուֆլոնների մեծ հոտեր կամ նախիրներ ավելի հազվադեպ են հանդիպում:

Բազմացումը

Բեղմնավորումը տեղի է ունենում նոյեմբերի կեսերից մինչև դեկտեմբերի կեսերը: Այս շրջանում էգերի քանակը հասնում է 10 – 15 –ի, իսկ արուներինը՝ մեկ - երկու կամ ավելի, այդ ժամանակ էլ հենց արուների միջև տեղի է ունենում խիստ պայքար:

Հղիության շրջանը տևում է 5 ամիս: Ծինը տեղի է ունենում մայիսին-հունիսի առաջին կեսին: Մուֆլոնը սովորաբար ունենում է 1 – 2 ձագ: Մինչև սեպտեմբեր – հոկտեմբեր ամիսները մայրը ձագին կերակրում է կաթով: Հետագայում ձագերն անցնում են բուսական կերի: Սովորաբար մուֆլոնը սեռական հասունության հասնում է կյանքի երրորդ տարում:

Թվաքանակը

Չնայած վայրի ոչխարի որսն արգելված է 1936 թ-ից, այնուամենայնիվ, դրանց ընդհանուր գլխաքանակը Հայաստանում ներկայումս հավանաբար 200-250-ից չի անցնում:
Այժմ հայկական մուֆլոնը կանգնած է իսպառ ոչնչանալու վտանգի առաջ:

Պահպանման միջոցները

Գրանցված է ՀՀ և միջազգային կարմիր գրքերում:

Սահմանափակող գործոնները

Հայկական մուֆլոնի բնական թշնամիներն են՝ ընձառյուծը և գայլը: Սակայն հայկական մուֆլոնի ոչնչացման պատճառը ոչ թե այս կենդանիներն են, այլ որսագողությունը:

Լուսանկարը՝ Ա. Մալխասյանի